Պաշտոնաթող եղավ, կուսակցափոխ չեղավ

Ադրբեջանյան շարժման ակունքներին մոտ կանգնած վանաձորցի գեղանկարիչ, ՀՀՇ անդամ, նախկինում Լոռի-Փամբակի ոստիկանության՝ կազմակերպված հանցագործությունների դեմ պայքարի բաժնի պետ Արամ Նազարյանը, որ պաշտոնաթող եղավ դեռեւս նախորդ իշխանությունների օրոք (թեպետ կուսակցափոխ չեղավ), վերջին տարիներին բնակվում է Վանաձորի մերձակա գյուղերից մեկում, զբաղվում է հողագործությամբ, սակայն ամիսը մի քանի անգամ այցելում է մարզկենտրոն՝ անհրաժեշտ գնումներ կատարելու (այդ թվում՝ ընդդիմադիր թերթեր, որոնք նա հատուկ իր համար պահել է տալիս կրպակներից մեկում): Վանաձոր կատարած նմանատիպ այցելություններից մեկի ժամանակ Արամ Նազարյանին «բռնեցրինք» Տիգրան Մեծ պողոտայում ընդդիմադիր թերթերը թեւատակին, եւ, առիթից օգտվելով, մի փոքր զրուցեցինք:

- Պարոն Նազարյան, մամուլում նշվել էր, որ «Ղարաբաղ» կոմիտեի Վանաձորի կորիզի անդամների մի մասը ձերբակալված է, մի մասը՝ փախուստի մեջ: Ինչպես տեսնում ենք, բարեբախտաբար, Դուք ազատության մեջ եք: Ինչպե՞ս դա Ձեզ հաջողվեց:

- Ճիշտն ասած, ես էլ եմ զարմացած, որ ազատության մեջ եմ, բայց մինչ օրս ինձ ոչ մի ոստիկան չի դիմել, չի անհանգստացրել: (Ի դեպ, վանաձորցիներից մեկը, իմանալով, որ Նազարյանին նման հարց ենք տվել, խոստովանեց, որ ինքն էլ է նրան այդ հարցը տվել, եւ Նազարյանը նեղացած ասել է. «Ինչ է, ուզում էիք անպայման ինձ է՞լ բռնած լինեին»:

- Դուք դիտե՞լ եք ՀՀ գլխավոր դատախազի այն հեռուստաելույթը, որտեղ նա, ըստ էության, Ձեզ ակնարկելով, հեգնել էր, թե «Նախկինների իշխանության ժամանակ միջակ նկարիչը կարող էր դառնալ կազմակերպված հանցագործությունների դեմ պայքարի բաժնի պետ»:

- Հա, գիտեմ, ես չեմ դիտել Աղվանի ելույթը, բայց ինձ պատմել են: Ոչինչ, ես դա իրեն ներում եմ: Ա. Նազարյանը փորձեց խոսակցությունը թեքել դեպի արվեստ, բայց մենք նրան կրկին վերադարձրինք դեպի քաղաքականություն:

- Մամուլում նշվել էր, որ ՀՀՇ Վանաձորի կառույցի ղեկավար, կալանքի տակ գտնվող Ռուբիկ Ոսկանյանը ցուցմունք է տվել ՀՀՇ մի քանի անդամների դեմ (որոնց թվում՝ 66-ամյա Մեսրոպ Զաքարյանի, որի դատաքննությանը մենք անդրադարձել ենք ապրիլի 15-ի համարում): Ինչպե՞ս կլուծվի կուսակցությունում Ոսկանյանի մնալ-չմնալու հարցը: ՀՀՇ-ն նրան կհեռացնի՞ շարքերից:

- Մինչեւ Ոսկանյանը ազատության մեջ չգտնվի, նրա հետ չխոսեմ, չիմանամ՝ ինչ պայմաններում է ցուցմունք տվել, չեմ կարող տեղի ունեցածին գնահատական տալ: Միգուցե ճնշում է գործադրվել նրա նկատմամբ:

Զրույցի ընթացքում Արամ Նազարյանը հայրենասիրական ոգով ելույթի անցավ եւ, իր մասին խոսելով երրորդ դեմքով, ասաց. «Նազարյան Արամը էսօր կարա գնա Ամերիկա, Անգլիա, Իսպանիա, բայց չի գնա, իր երկիրը, իր հայրենիքը չի թողնի...»:

Ես էլ եմ զարմացած, որ ազատության մեջ եմ, բայց մինչ օրս ինձ ոչ մի ոստիկան չի դիմել, չի անհանգստացրել:

Գայանե ՀՈՎՍԵՓՅԱՆ